ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԱՇՁԲ-20/1-Պ

20-ը մարտի 2020թ.

ք.Երևան

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Մ.Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և

«Նորմակոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ն.Յոլչյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կապալառու», մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Կապալառուն պարտավորվում է սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված նախահաշվին համապատասխան կատարել հրդեհի տագնապի համակարգի (այսուհետ՝ Համակարգ) տեղադրման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքները և վարձատրել Կապալառուին դրա դիմաց սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

1.2. Կապալառուն երաշխավորում է, որ սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, նորմերին, կանոններին համապատասխան, իսկ Աշխատանքների արդյունքը ողջամիտ ժամկետի սահմաններում պիտանի է լինելու Պայմանագրով սահմանված օգտագործման համար:

1.3. Սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքները կատարվելու են 2020թ.-ի ապրիլի 01-ից մինչև 2020թ.-ի մայիսի 01-ը ներառյալ:

1.4. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1. Աշխատանքները կատարվելու են Կապալառուի ուժերով, Կապալառուի տրամադրած՝ սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված նյութերով, միջոցներով, սարքավորումներով:

2.2. Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի, միջոցների և սարքավորումների որակի համար:

2.3. Կողմերն արձանագրում են, որ սույն Պայմանագրի կատարման համար Կապալառուի կողմից կիրառվող սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված նյութերի, միջոցների և սարքավորումների սեփականության իրավունքը փոխանցվում է Պատվիրատուին Աշխատանքների հանձնման-ընդունման ակտի երկկողմանի հաստատվելու պահից:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ***Պատվիրատուն իրավունք ունի՝***

3.1.1. Լիազորել այլ, այդ թվում՝ երրորդ անձի, իրականացնել Աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողությունը:

3.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող Աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը՝ պահանջելով տրամադրել Աշխատանքների կատարման ընթացքի և որակի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը:

3.1.3. Պահանջել Կապալառուից աջակցել Պատվիրատուին Աշխատանքների կատարման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև կատարված Աշխատանքների արդյունքն ընդունելիս:

3.1.4. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կապալառուին տալ Աշխատանքների կատարմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ:

3.1.5. Գրավոր ծանուցմամբ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

i. Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքները կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

ii. Աշխատանքների կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ դրանք պատշաճ չեն կատարվելու և առկա թերությունների վերացման համար Պատվիրատուի նշանակած ողջամիտ ժամկետում այդպիսի թերությունները Կապալառուի կողմից չեն վերացվում,

iii. Կապալառուն այլ կերպ թույլ է տալիս սույն Պայմանագրի էական խախտում:

3.1.6. Ցանկացած ժամանակ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հանձնել անավարտ Աշխատանքների արդյունքը՝ այդ մասին 10 (տասը) աշխատանքային օր առաջ ծանուցելով Կապալառուին, վճարելով մինչև Պայմանագիրը կատարելուց հրաժարվելու վերաբերյալ Պատվիրատուի համապատասխան ծանուցումը ստանալու պահը կատարած աշխատանքին համարժեք գումարը, ինչպես նաև հատուցելով Պայմանագրի դադարմամբ Կապալառուին պատճառված վնասները՝ ամբողջ աշխատանքի համար սահմանված և կատարված աշխատանքի համար վճարված մասի գների տարբերության չափով:

3.2. ***Պատվիրատուն պարտավոր է՝***

3.2.1. Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին՝ տրամադրելով վերջինիս անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր, Կապալառուի ներկայացուցիչներին Պատվիրատուի տարածք մուտք գործելու հնարավորություն և Աշխատանքների կատարման տարածքին, ինչպես նաև Աշխատանքների պատշաճ կատարման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներին հասանելիություն:

3.2.2. Սույն Պայմանագրի 3.4.4. կետով սահմանված հանգամանքների վերաբերյալ Կապալառուի նախազգուշացումը ստանալուց 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին գրվոր հայտնել այդպիսի հանգամանքների կապակցությամբ իր դիրքորոշումը:

3.2.3. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքները (դրանց արդյունքը), իսկ Պայմանագրից Աշխատանքների արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքներում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին սույն Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով հայտնել Կապալառուին:

3.2.4. Վճարել Կապալառուին պատշաճ կատարված Աշխատանքների դիմաց սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:

3.3. ***Կապալառուն իրավունք ունի՝***

3.3.1. Պատվիրատուից պահանջել իրեն ապահովել սույն Պայմանագրի 3.2.1. կետով սահմանված պայմաններով:

3.3.2. Իր տրամադրած նյութերի և սարքավորումների, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Կապալառուին մատուցվող ծառայությունների արժեքի էական բարձրացման դեպքում, որը հնարավոր չէր կանխատեսել Պայմանագիրը կնքելիս՝ պահանջել ավելացնելու Պայմանագրի գինը, իսկ այդ պահանջը կատարելուց Պատվիրատուի հրաժարվելու դեպքում լուծել Պայմանագիրը:

3.3.3. Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց ու պահանջել հատուցելու դրա դադարման հետևանքով իրեն պատճառված վնասները, եթե Պատվիրատուն, չնայած սույն Պայմանագրի 3.4.4 կետում նշված հանգամանքների մասին Կապալառուի կողմից ժամանակին հիմնավոր նախազգուշացմանը, ողջամիտ ժամկետում անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել այն հանգամանքները վերացնելու համար, որոնք սպառնում են կատարվող աշխատանքի պիտանիությանը,

3.3.4. Այն դեպքում, երբ աշխատանքը կատարելն անհնար է դարձել Պատվիրատուի գործողությունների կամ վրիպումների հետևանքով՝ կատարված աշխատանքի հաշվառմամբ ստանալ Պայմանագրի գնի համապատասխան մասը:

3.3.5. Պատվիրատուից պահանջել ընդունել պատշաճ կատարված Աշխատանքները:

3.3.6. Պատվիրատուից պահանջել ընդունած Աշխատանքների դիմաց վճարել սույն Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում, իսկ կետանցի դեպքում վճարել նաև՝ սույն Պայմանագրի 7.5. կետով սահմանված տույժը:

3.4. ***Կապալառուն պարտավոր է՝***

3.4.1. Աշխատանքները կատարել անձամբ, իր ուժերով, սույն Պայմանագրով նախատեսված ժամկետում և պատշաճ որակով:

3.4.2. Կատարել Աշխատանքների վերաբերյալ Պատվիրատուի տված ողջամիտ ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն Պայմանագրին, կիրառելի օրենսդրության պահանջներին:

3.4.3. Եթե առաջացել է լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն, որի պատճառով էապես ավելացել է Աշխատանքների համար սույն Պայմանագրով սահմանված գինը՝ այդ մասին ժամանակին զգուշացնել Պատվիրատուին: Այն դեպքում, եթե Կապալառուն Պատվիրատուին ժամանակին չի նախազգուշացնում Պայմանագրի գինն ավելացնելու անհրաժեշտության մասին, պարտավոր է կատարել Պայմանագիրը՝ պահպանելով Պայմանագրով որոշված գնով վարձատրություն ստանալու իրավունքը:

3.4.4. Պատվիրատուին անհապաղ նախազգուշացնել և մինչև նրանից ցուցում ստանալը դադարեցնել աշխատանքը, եթե հայտնաբերվել են՝

i. Աշխատանքների կատարման եղանակների մասին Պատվիրատուի ցուցումների իրագործման հետ կապված՝ նրա համար հնարավոր անբարենպաստ հետևանքներ.

ii. Կապալառուից անկախ այլ հանգամանքներ, որոնք սպառնում են կատարվող աշխատանքի արդյունքի պիտանիությանը և ամրությանը կամ անհնար են դարձնում դրանք ժամանակին ավարտելը:

Կապալառուն, որը Պատվիրատուին չի նախազգուշացրել սույն կետում նշված հանգամանքների մասին կամ շարունակել է աշխատանքը՝ չսպասելով նախազգուշացման պատասխանի համար սույն Պայմանագրի 3.2.2. կետով սահմանված ժամկետի ավարտին կամ, չնայած աշխատանքները դադարեցնելու մասին Պատվիրատուի ժամանակին տված ցուցումին, շարունակել է դրանք, իրավունք չունի իրեն կամ իր կողմից Պատվիրատուին համապատասխան պահանջներ ներկայացնելիս վկայակոչել նշված հանգամանքները:

3.4.5. Պատասխանատվություն կրել Աշխատանքների կատարման ժամկետի խախտման համար՝ վճարելով սույն Պայմանագրի 7.2. կետով նախատեսված տույժը և հատուցելով կետանցով Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.6. Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքների արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.7. Սույն Պայմանագրի 3.1.5. կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել սույն Պայմանագրով նախատեսված տուժանքը:

3.4.8. Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏ

4.1 Սույն Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում կատարված Աշխատանքների արդյունքն ընդունելու օրվան հաջորդող 365 (երեք հարյուր վաթսունհինգ) օրը:

4.2 Եթե կատարված Աշխատանքների արդյունքում երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել այդպիսի թերությունները:

4.3 Կատարված Աշխատանքների արդյունքում երաշխիքային ժամկետի ընթացքում հայտնաբերված թերությունները Պատվիրատուի սահմանած ողջամիտ ժամկետում Կապալառուի կողմից չվերացվելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի ինքնուրույն կամ երրորդ անձի ներգրավմամբ վերացնել այդպիսի թերությունները և պահանջել Կապալառուից հատուցել թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը:

4.4 Այն դեպքում, երբ Պատվիրատուն աշխատանքի արդյունքի թերությունները հայտնաբերել է երաշխիքային ժամկետի ավարտից հետո, սակայն Աշխատանքների արդյունքն ընդունելու օրվան հաջորդող երկու տարվա սահմաններում, Կապալառուն պատասխանատվություն է կրում, եթե Պատվիրատուն ապացուցում է, որ թերություններն առաջացել են մինչև աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելը կամ մինչև այդ պահը ծագած այլ պատճառներից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Աշխատանքների կատարման ավարտից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը:

5.2 Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կապալառուի աջակցությամբ ստուգում է կատարված Աշխատանքների որակը:

5.3 Հանձնման-ընդունման ակտը սույն Պայմանագրի 5.2. կետում նշված ժամկետում ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման ակտը չի ստորագրվում և

i. Կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով հայտնաբերված թերությունների վերացման համար անհրաժեշտ և Կապալառուի կողմից անհատույց կատարման ենթակա աշխատանքները և դրանց կատարման ողջամիտ ժամկետները.

ii. Պատվիրատուն Կապալառուի նկատմամբ կիրառում է սույն Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

5.4 Եթե Պայմանագրի 5.2. կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքների արդյունքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված Աշխատանքները համարվում են ընդունված և Պայմանագրի 5.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը:

5.5 Եթե Պատվիրատուն Աշխատանքներն ընդունում է առանց սույն Պայմանագրի 5.2. կետով սահմանված ժամկետում դրանց արդյունքների ստուգման, ապա զրկվում է աշխատանքի այն թերությունները վկայակոչելու իրավունքից, որոնք կարող էին հայտնաբերվել Աշխատանքների արդյունքը սովորական եղանակով ընդունելու ժամանակ (բացահայտ թերություններ):

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Սույն Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 998.086 (ինը հարյուր իննսունութ հազար ութսունվեց) ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր կիրառելի հարկերը: Սույն Պայմանագրի արժեքը ներառում է Պայմանագրի պատշաճ կատարման կապակցությամբ Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

6.2 Պատվիրատուն Աշխատանքի կատարման դիմաց վճարում է հետևյալ ժամկետներում.

i. Ընդհանուր արժեքի 50 (հիսուն) տոկոսը որպես կանխավճար՝ մինչև 2020թ.-ի ապրիլի 10-ը ներառյալ,

ii. Ընդհանուր արժեքի մնացյալ մասը հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում: Հաշիվ-վավերագիրը տրամադրվում է հանձնման-ընդունման ակտի երկկողմանի հաստատվելուց 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Կանխավճարը մարվում է կատարված Աշխատանքների արդյունքը հանձնելիս:

6.3 Սույն Պայմանագրով վճարումներն իրականացվում են անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կապալառուի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով: Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը: Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կապալառուի բանկում՝ Կապալառուն:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքների որակի և դրանց կատարման ժամկետի պահպանման համար:

7.2 Աշխատանքների կատարման սույն Պայմանագրով նախատեսված ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի ընդհանուր արժեքի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

7.3 Կատարված Աշխատանքների արդյունքը Պայմանագրի 5.3. կետով նախատեսված հիմքով չընդունվելու, ինչպես նաև 3.1.5. կետով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր արժեքի 10 (տասը) տոկոսի չափով:

7.4 Պայմանագրի 7.2. և 7.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարներից:

7.5 Աշխատանքների համար վճարելու սույն Պայմանագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից կետանցի յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

7.6 Տուժանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7.7 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1 Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են ջրհեղեղը, հրդեհը, երկրաշարժը, փոթորիկը, սողանքը և բնական այլ աղետները, պայթյունը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքացիական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, համաճարակները, էմբարգոն, սույն Պայմանագրի էական պայմանները կարգավորող օրենսդրության փոփոխությունները, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պայմաններով պարտավորությունների կատարումը:

8.2 Կողմը, որի մոտ ծագել է ֆորսմաժորային իրավիճակ, պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում, սակայն ոչ ուշ, քան նման իրավիճակի վրա հասնելուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցի մյուս Կողմին նման իրավիճակի առաջացման, իսկ հետագայում նաև՝ բնականոն պայմանների վերականգնման մասին, հակառակ դեպքում կզրկվի ապագայում ֆորսմաժորային իրավիճակը որպես հիմնավորում օգտագործելու իրավունքից:

8.3 Ֆորսմաժորային իրավիճակի վերաբերյալ հանդիպակաց Կողմին ծանուցում ուղարկելու պահից Կողմի համապատասխան պայմանագրային պարտավորությունների կատարման պահանջը համարվում է կասեցված՝ մինչև Պայմանագրի կատարման համար բնականոն պայմանների վերականգնումը:

8.4 Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

9. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

9.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին կամ Պայմանագրի պայմաններին, այդ թվում՝ արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին, ներառյալ նոր լուծումներին, տեխնիկական գիտելիքներին, առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

9.2. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության, ինչպես նաև հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

10.2 Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

10.3 Պայմանագրից ծագած՝ Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

10.4 Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

10.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) կրած վնասները տվյալ Կողմի կրած վնասներն են:

10.6 Այն դեպքում, երբ Կապալառուի փաստացի ծախսերը պակաս են այն ծախսերից, որոնք հաշվի են առնվել Աշխատանքների գինը որոշելիս, իսկ Պատվիրատուն չի ապացուցում, որ Կապալառուի կատարած

խնայողությունն ազդել է Աշխատանքների որակի վրա, առաջացած խնայողությունը հավասարապես բաշխվում է Կողմերի միջև, ինչի մասին կատարվում է համապատասխան նշում Աշխատանքների հանձնման-ընդունման ակտում: Պատվիրատուն իրավունք ունի սույն կետով սահմանված դեպքում կատարված խնայողությունը հաշվանցել Կապալառուին վճարման ենթակա գումարից:

10.7 Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

10.8 Սույն Պայմանագրի Հավելված 1-ը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

10.9 Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված է Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

10.10 Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները կարգավորվում են Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ՝ կախված այդպիսի լուծման շարժառիթ հանդիսացած հանգամանքներից:

10.11 Աշխատանքների կատարման ժամկետը մինչև Պայմանագրով տվյալ ժամկետի լրանալը Կապալառուի առաջարկությամբ կարող է երկարաձգվել՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերանա Աշխատանքների արդյունքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով Աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետի լրանալուց առնվազն 5 (հինգ) օրացուցային օր առաջ: Սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 (երեսուն) օրացուցային օրով:

10.12 Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

10.13 Սույն Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

10.14 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

10.15 Սույն Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10.16 Սույն Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կապալառու**
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«Նորմակոմ» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ավան, Դուրյան թաղ. 48/33
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ՝ 00847633
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000	Հ/Հ՝ 247120034753
Մ.Գրիգորյան	**Ն.Յոլչյան**
Գործադիր տնօրեն	*Տնօրեն*

Հավելված 1
2020թ.-ի մարտի 20-ին կնքված
ՀՀՀ-ՄԱԱՇՁԲ-20/1-Պ պայմանագրի

ՀՐԴԵՀԻ ՏԱԳՆԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հ/հ	Անվանում	Տեսակ	Չ/մ	Քանակ	Միավորի գին	Այդ թվում		Գումար	Այդ թվում	
						Նյութի գին	Աշխա-տանք		Նյութի գին	Աշխա-տանք
1	Ընդունող–հսկող և ղեկավարող հասցեային սարք	ППКОПУ 01149-2-1 Рубеж-2ОП порт.R3	հատ	1	154,413	91,913	62,500	154,413	91,913	62,500
2	Ռելեային մոդուլ	РМ-4К порт.R4	հատ	4	26,500	19,000	7,500	106,000	76,000	30,000
3	Լուսաձայնային շչակ	ОПОП 124-7	հատ	4	5,000	2,500	2,500	20,000	10,000	10,000
4	Տեղեկատվական վահանակ	ОПОП 1-8	հատ	3	4,500	2,500	2,000	13,500	7,500	6,000
5	Անխափան էլեկտրասնուցման աղբյուր	ИВЭПР 12/3,5 2x7	հատ	1	24,000	21,000	3,000	24,000	21,000	3,000
6	Անխափան էլեկտրասնուցման աղբյուր	ИВЭПР 12/2 1x7 - Р	հատ	1	21,000	18,000	3,000	21,000	18,000	3,000
7	Մարտկոց	АКБ 12V-7A	հատ	2	9,800	8,800	1,000	19,600	17,600	2,000
8	Մալուխ հրակայուն	КПСнг(А)-FRLS1X2X0.5мм	մետր	800	320	170	150	256,000	136,000	120,000
9	ՊՎՔ կոշտ խողովակ	Ø 16 մմ	մետր	300	330	150	150	99,000	45,000	45,000
10	ՊՎՔ ճկվող խողովակ	Ø 16 մմ	մետր	100	300	150	150	30,000	15,000	15,000
11	Վթարային լուսավորության լամպ		հատ	8	8,000	8,000	0	64,000	64,000	0

Ընդամենը								807,513	502,013	296,500
	Այլ ծախսեր 3%							24,225		
	Ընդամենը							831,738		
Ա.Ա.Հ. 20%								166,348	100,403	59,300
ԸՆԴՀԱՆՈՒՐ								998,086	602,416	355,800

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Մ.Գրիգորյան
Գործադիր տնօրեն

Կապալառու
«Նորմակոմ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ավան, Դուրյան թաղ. 48/33
ՀՎՀՀ՝ 00847633
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247120034753

Ն.Յոլչյան
Տնօրեն

«ՆՈՐՄԱԿՈՄ»
«НОРМАКОМ»
NORMACOM
00847633